տին Բեթղեհէմի, հարկ է սկիզբն առնել քննութեան Զիթենեաց լերին. որպէս խոստացան Հայք յառաջագոյն տալ զպատշաճաւոր պատասխանիս զնմանէ, այժմ պատմեացեն ճշդութեամբ զչինուածոց եւ զնորաստման իրաց 'ի տեղւոջ յայնմիկ։

Փոխանորդն Հայոց. Վասն չինութեան և նորոգութեան լերին Զիթենեաց՝ տուեալ է մեզ հրովարտակ արքունուստ 'ի թուին ՕՀ և ապա 'ի հաստատութիւն նորին, վասն Զիթենեաց լերին եւ ընդհանուր նորոգութեան Տաճարին Ս. Յարութեան 'ի ձեռն Հայոց, դարձեալ հրովարտակ 'ի թուին ՕՂ, որ մին է ջնջեալ հրովարտակաց։ Սակայն առաջինն ոչ է ջնջեալ, չինութիւնք և նորոգութիւնք Զիթենեաց լերին հիմնեալ են 'ի վերայ երկուց հրովարտակաց՝ և լեալ հրամանաւ նախկին Դատաւորի և երեւելեաց քաղաքիս, եւ այնուհետեւ ոչ ուրեք լեալ է չինութիւն և նորոգութիւն։ Իսկ նոր հրովարտակն Յունաց՝ որ տրեալ է յամսեան Զիլհիճէ և 'ի թուին ՕՂ և բովանդակէ զհարցումն նորոգելի տեղեաց, թուական նորին յետոյ է քան զթուականն հրովարտակաց մերոց, որովք արարաք զչինութիւնն և զնորոգութիւնն, և չեմք հակառակ նոցին հրովարտակի։ Յոյնք ծանուցեալ են Հիւպատոսին Ռուսաց թէ՝ Հայք ոչ ունին հրաման չինութեան Զիթենեաց լերին, և թէ՝ տեղին այն ուխտատեղի է Հայ, Յոյն և Կաթոլիք կրօնից, եւ թէ զբանալի տեղւոյն գրաւեալ են Հայք. անտեղի են այսոքիկ՝ զի լեառն Զիթենեաց, ոչ է յատկացեալ միայն երից ազգաց կատարել զուխտս, այլ համայն Քրիստոնէից. զի տեղի է Համբարձման Քրիստոսի յերկինս. և դուռն նորա ոչ երբէք փակեալ է, զի Քրիստոնեայք ըստ նախնի սովորութեանց կատարեն զուխտս և զպատարագս, որպէս Լատինք 'ի տարւոջ մի անգամ 'ի ներքոյ գմբեթին հրովարտակաւ, Յոյնք առանց հրովարտակի 'ի գաւթին երկիցս 'ի տարւոջ. Խպթիք և Ասորիք ըստ սովորութեան, և ոչ ումեք ընդդիմացեալ են Հայք։ Եւ ըստ մտաց հրովարտակին տուաւ մեզ Հէօճմէթ 'ի դատարանէ, սակս պահպանութեան եկեղեցական սպասուց և յանդորրութիւն Լուսարարաց՝ առնուլ զբանալին 'ի ձեռաց այլոց և մնալ 'ի ձեռս Հայոց. զի իւրաքանչիւր